

• ԳՐԱԽՈՍԱԿԱՆ •

ԱՅԳԵԿՈՒԹՔ – Գրեց Հայկ Պարիկեան:
Հալէպ, 1962, էջ 80:

Կարծեմ առաջին անգամն է որ Պ. Հայկ Պարիկեան կու գայ մտնելու հայ քերթողական անդամատանն ներս: Ութսուն էջերով փոքրիկ հատոր մը, 51 քերթումներով իր ներկայ հունձքը կը կազմէ:

Չունի երկարաչուն քերթումներ. քնարական է, եւ քնարի թեթեւ լարերուն վրայ կը թրթռացնէ իր սրտին զգացումները:

Պատահական նիւթեր ընտրած է. իր ուսուցչական կեանքի շրջանին տոները, դպրոցները, աշակերտները առիթ տուած են յօրինելու զանազան քերթումներ, որոնք յետոյ ամփոփած է հատորի մը մէջ: Անշուշտ վայրկենական ազդեցութիւններ են, առանց որոշ ծրագիր մը եւ մարդկային հոգեբանական հարց մը լուծելու յաւակնութեան:

Ձանացեր է սեղմ եւ ինքնատիպ ըլլալ, հեռու վարժապետական կազմաւորուած ձեւերէ, հեռու տափակ տողերէ եւ տաղաչափական անիմաստ տուններէ: Զի սիրեր շատ պատկերներ յօրինել, իր մտածածն ու զգացածը պարզօրէն կ'ըսէ, բայց յաճախ կը զործածէ անակաճանչ, որոնք որոշ արդելք մը կ'ըլլան իր թոխքին:

Վստահ է թէ մեծավայելուչ տողեր յօրինելու յաւակնութիւնը չէ ունեցած, ոչ արծուի թեւեր փոխ առած է՝ անհաս երկինքներ թռչելու: Նման է այն պարտիզանին, որ իր փոքրիկ ածուին մէջ ամփոփուած՝ ընտանի ծաղիկներով կը զբաղի:

Ունի անկեղծութիւն եւ փափուկ զգացում: «Այգեկութիւն» անուանած է իր հատորը, բայց անշուշտ հեղինակը որթատունկով կամ ողկոյններով չէ որ կը զբաղի, այլ իր սրտէն բղխած տաք ողկոյցի մը քաղցր հոգն է որ կը սիրէ բաշ-

խել ընթերցողներուն: Եւ արդէն քերթումած ի մը մէջ այդ զգացումը կը յայտնէ:

Նրգել կ'ուզեմ անտրտում,
Հոգիս բանալ բոլորին,
Սիրագործով ու ժպտուն:

Իր բարի զգացումներով, լաւատեսութեամբ եւ ցաւին հանգչող համակամութեամբ, Պարիկեան սիրտ մ'ունի՝ զոր պէտք է սիրել:

* * *

ՔԵՐԹՈՒԹՅՈՒՆԵՐ – Գրեց Զարեհ Մելիք-նեան: Պէյրութ, տպ. Սեւան, 1962, էջ 127:

Զարեհ Մելիքեան իր բանաստեղծական չորրորդ հատորն է որ հրապարակ հանեց: Անշուշտ ինքն ալ եկաւ այս հատորով ընթերցողներուն իր զգացումները, նորութիւնները, հոգեբանական հարցերը արտայայտելու: Մտաւորական նոր հորիզոնները բացած պիտի ըլլայ մեզ երկինքներ առաջնորդելու համար: Ունի՞ր արդեօք որոշ ծրագիր մը եւ բանաստեղծական ուղեցիկ մը մեզ տանելու խորհրդաւոր աշխարհներ:

Ընթերցողն սպառելէ վերջ այս 127 էջնոց հատորը՝ հոգեկան անորոշ տրամադրութեան մէջ կը մնայ. ինքզինք կը դռնէ ամառի դաշտի մը մէջ, ուր արահետ մը խոկ չկայ՝ որոշ ուղղութիւն մը դռնելու, այլ երկրաչափական զիծեր՝ որոնք աւելի կը մոլորեցնեն քան թէ կ'առաջնորդեն:

Մելիքեան շատ փնտռած է նորոյթներ, արդիականութիւն եւ մասնաւորապէս խոր թաղուած է նիւթապաշտութեան մէջ: Իր վերնադիրներն իսկ աւելի «ռեֆլաք» կը նմանին՝ քան թէ սրտի տաք զգացումներ արտայայտող քերթումներու: Քերթումած ի մը տիտղոսն ինքնին արժէք մը չունի, սակայն անունի կը նըմանի՝ որ կը զննէ մեր զաւակներուն. զեղեցիկ անուն մը՝ կարծես՝ ենթական աւելի համակրելի կը դարձնէ:

Իր նախորդ հատորներուն մէջ ալ այս տարօրինակ ինքնատեղութեան ձգտումը կայ: Անշուշտ խորհած է որ արդի, թեւեւ ապագայապաշտ բանաստեղծ մը պիտի կարենայ ըլլալ. բայց իր ոտքերը շատ խրած են հողին մէջ, եղած է քերթող մը՝ որ իր թեւերը կտրած, կարծես չորս ոտքերուն վրայ կը քայլէ:

Զ. Մելիքեանի քով ներշնչումը շատ տուած է զրեթէ բոլոր քերթումներուն մէջ: Հարապատ զգացումներ չէ կարելի դռնել այն քերթումներուն մէջ՝ ուր ընկերային հարցեր, իմաստասիրական խնդիրներ կամ հոգեբանական վերլուծումներ կը փնտռուին: Իր նկարագրութիւններուն մէջ յաճախ մեղանշած է զեղեցիկին դէմ. պատկերներ, բազմատուրիւններ ըրած է, որոնք աւելի փնտրուած բառեր, աստիճաններ, իրարու մօտ շարուած սովորական իմաստներ են՝ քան թէ բանաստեղծօրէն յօրինուած զեղեցիկութիւններ: Կարգացէք հետեւեալ տողերը:

ԿԵՍՈՐ ԱՄԱՌՆԱՅԻՆ

Յերեկը գէր, դանդաղ ու մերկամարմին
Կը վազէ դէպի կէսօր... [Կիմ,
Միսերը ֆերմակ ու քրտնած կը շարժին
Ծանրօրօր...]:

Կարծեմ չեղաւ. շատ հաճելի եւ գիւտաւոր նմանութիւն չէ խեղճ ցերեկին եւ այդ դանդաղ կոտ ու գէր մերկամարմին կնոջ մէջ: Երեւակայեցէք հարկւր յիսուն քերտոց կին մը, որուն երեսէն փիղի տկանջներու պէս բարդ բարդ միսեր կը կախուին. եթէ ցերեկն այդ կնոջ պէս ծանրօրօր քայլէ՝ 72 ժամէն երեկոյեան չենք հասնիր. շատ թանձրամարմին գիւտ է: Նոյնը կարելի է ըսել Քանսեր ունէր, Նրգ երգոց եւ այլ շատ մը քերթումներուն համար: Շատեր այնքան նիւթին կապուած՝ որ կարծես կառէ շինուած արձաններ են, եւ զեղարուեստը կարող չէ ոսկի բեհեղով զանոնք զարդարել:

Ինչո՞ւ Զ. Մելիքեան այս ճամբան

բռնած յամառօրէն առաջ կ'երթայ. ինչո՞ւ իր սրտին դռները չի բախեր տաք զգացումներ յայտնելու. ինչո՞ւ սիրոյ աղբիւրը չ'երթար իր հոգեկան ծարաւն յազեցնելու: Մենք, արեւելցիներս, զօրութեան մէջ զեղեցիկութիւն կը փնտռենք, պատկերին մէջ ազնիւր կը տեսնենք: Մինչ Մելիքեան մեր վրան այն տպաւորութիւնը կը ձգէ՝ թէ մեծ բաներ լսելու մարմաջ ունի, առանց մեծ տաղանդի:

Այն հինգ Նրգեր ծնողական, ըստ իս լաւագոյն էջերը կը կազմեն. հարապատ են, զգացուած ու անկեղծ. եւ Զ. Մելիքեան լաւ պիտի ընէ՝ եթէ յաջորդ հատորներուն մէջ քիչ մը իր սրտին հարցնէ զրեկիքները:

* * *

ՔՆԱՐ ՄԱՅՐԱԿԱՆ – Գրեց Վարդուհի:
Պէյրութ, 1961, էջ 45:

Քսանեւհինգ էջնոց այս փոքրիկ հատորը բոլորովին նուիրուած է հեղինակին մօրը:

Պատահական նիւթեր չունի. որոշ ծրագիր մը զրեկ է հեղինակը՝ երգել մօր սէրը, անոր սիրտը, անոր ծնողական փափուկ զգացումները եւ փոխադարձ իր սէրը մօր հանդէպ:

Կը հետեւի Յովհաննէս Ծիրաղի քայլերուն՝ նիւթի մշակումին մէջ: Անշուշտ աշխարհիս վրայ միտակը չէ՝ մօր հանդէպ գիրք կամ քերթում նուիրելու: Սակայն Վարդուհի ցոյց կու տայ այն անմոռանալի սէրը՝ որ ունի իր մօր համար:

Քսանեւհինգ քնարերգական քերթումներ են, ընտանեկան յարկին տակ զրուած եւ այդ բոյնին սիրով ու քաղցրութեամբ խնկաւորուած:

Փաղաքական խօսքերով, զրոյցներով, կարօտի նամակներով, նահատակ մայրերու նուիրուած քերթումներով, Վար-

